ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
25 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 27-Ա

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջները՝

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 25-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին:

2.Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 13-ի թիվ 3-Ա որոշման հավելվածում լրացում կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
25 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով,ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի <<Նոտարարկան վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին >> N 1851-Ն որոշման

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի:

2. Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք
1) Ջրամատակարարման ներքին ցանց.
Գույքի ծածկագիրն է՝ N 2121391 տրված 31.01.2006թ.
Գույքի մակերեսը՝ 4530 գմ
Գույքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Հողամասի գործառնական նշանակությունը՝խառը կառուցապատում:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ _____
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ _____
3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ _____
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ _____
5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
25 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 29-Ա

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 13-ի << Վերին Պտղնի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին>> թիվ 3-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը՝

1. Որոշման հավելվածում << Գրասենյակային գույք>> բաժնի աղյուսակում <<N>> սյունակում լրացնել <<39>> թիվը, << Գույքի անվանումը>> սյունակում << համակարգիչ>> բառը, <<քանակ>> սյունակում՝<<1>> թիվը, << գումար>> սյունակում՝<< 228500 >> թիվը, <<գնման տարեթիվը>> սյունակում ՝<< 2016 թ.>> թիվը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ _____
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ _____
3. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ _____
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ _____
5. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ